ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«04» Հոկտեմբեր 2011թ. N 88

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ«ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ»ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Նախագահի 1997թ.-ի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի և ՀՀ կառավարության 2011թ.-ի օգոստոսի 11-ի թիվ 1153-Ն որոշման թիվ 1 հավելվածի պահանջներով

Որոշում եմ

1.ՀՀ կառավարության 2011թ.-ի օգոստոսի 11-ի«Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին գումար հատկացնելու և ՀՀ կառավորության 2011թ.-ի հուլիսի 21-ի թիվ 1030-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1153-Ն որոշմամբ հաստատված հավելվածով ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին 2011թ.-ին պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» հոդվածով հատկացված 4677.2 հազ.դրամ գումարից 1177.2 հազ.դրամ գումարը սահմանված կարգով հատկացնել ՀՀ Վայոց ձորի մարզի«Եղեգնաձորի երաժշտական դպրոց»պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

2.Հանձնարարել «Եղեգնաձորի երաժշտական դպրոց»պետական ոչ առևտրային կազմակերպության ղեկավարությանը՝

1.Հատկացված 1177.2 հազ.դրամ գումարը նպատակաուղղել«Եղեգնաձորի երաժշտական դպրոց»պետական ոչ առևտրային կազմակերպության համար երաժշտական սարքեր և սարքավորումների ձեռք բերմանը:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Ռ.Հայրապետյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս.ԲԱԳՐԱՏՅԱՆ